

Թորմաջյան Հովհաննես Վաչեի



Ծնվել է 1956թ. նոյեմբերի 7-ին:

Ինժեներ-հիդրոտեխնիկ է (Երևան, ԵրՊԻ 1978թ.), տեխնիկական գիտությունների դոկտոր (Լենինգրադ (ներկայումս՝ Սանկտ Պետերբուրգ) 1991թ.), պրոֆեսոր (Մոսկվա, 1994թ.):

1978-1993թթ.՝ Աշխատանքներ ԵրՊԻ-ում (այժմ՝ ԵՃՇՊՀ) ասիստենտ, ավագ գիտաշխատող, ԵրՄԻ-ում՝ դոցենտ, Երիտասարդության Երևանի գիտատեխնիկական կենտրոնում՝ տնօրեն, Ի.Վ.Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտի խորհրդի նախագահ:

1983թ.՝ Զանգեզուրի պոչամբարի նախագծի վթարային ռեժիմի հեղեղատարի

իրականացման կատարող:

SW 96/022 Des «Թալինի, Շիրակի և Հոկտեմբերյանի ռոտաման համակարգի 2-րդ կարգի ջրանցքների նախագծի» (ՀՀ ռոտաման համակարգերի սվերականգնման ԾԻԳ-ի պատվերով) գիտական խորհրդատու:

SW-96/016 Mod «Կոտայքի ջրանցքի ՊԿ 52+97 հանգույցի մոդելային հետազոտությունների» գիտական խորհրդատու:

SW-GR/006 «23 պատվարների աղետային ջրթողների հետազոտությունը»: աշխատանքի գիտական խորհրդատու:

Գետիկի ջրամբարի նախագծի աղետային ջրհեռի պատասխանատու կատարող:

1993-1995թթ.՝ Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտի տնօրեն:

1995-1999թթ.՝ ՀՀ ազգային Ժողովի պատգամավոր:

1995-1996թթ.՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության վարչության պետ:

2001-2002թթ.՝ ՀՀ ռոտաման համակարգերի վերականգնման ԾԻԳ-ի խորհրդական ջրային օրենսդրության բարեփոխումների հարցերով:

2001-2003թթ.՝ ՀՀ ջրային ոլորտի բարեփոխումների աշխատանքային խմբի գիտական ղեկավար:

2003թ.՝ Համաշխարհային բանկի, Համայնքային զարգացման ծրագրի շրջանակներում համատիրությունների աջակցման և զարգացման նպատակով օրենսդրական և ենթաօրենսդրական նորմերի բազայի մշակման խմբի ղեկավար:

2005-2006թթ.՝ ՀՀ ջրի ազգային ծրագրի մշակման խմբի գիտական ղեկավար:

2006թ. մինչ օրս՝ Ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման և շահագործման ուղղություններով հետազոտական աշխատանքային խմբի ղեկավար:

2006թ.-ից մինչ օրս Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ռեկտորն է: Հասարակական կարգով աշխատել է՝

ՀՀ ԲՈՒՀ-ի թիվ 030 մասնագիտական խորհրդի նախագահ:

Հիդրավիկական հետազոտությունների հայկական ազգային ընկերություն նախագահ:

Հայաստանում ռուսաստանյան բուհերի շրջանավարտների միավորման նախագահ:

200-ից ավելի գիտական աշխատանքներ, այդ թվում՝ 5 մենագրության հեղինակ է:

2013 թվականի մայիսի 5-ին Հայաստանի Հանրապետական կուսակցության համամասնական ցուցակով

ընտրվել է Երևանի ավագանու անդամ:

Պետական պարգևներ

2011թ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի հրամանագրով՝ պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով:

2006թ.՝ հուշամեդալ՝ ՀՀ վարչապետ Ա.Ն. Մարգարյանի կողմից:

2011թ.՝ շնորհակալագիր՝ ՀՀ վարչապետ Տ.Ս. Մարգարյանի կողմից:

2013թ.՝ շնորհակալագիր՝ ՌԴ Նախագահ Վ.Վ.Պուտինի կողմից:

Մրցանակներ.

1986թ.՝ Հայաստանի լենինյան կոմերիտմիության մրցանակ գիտության և տեխնիկայի բնագավառում (Երևան):

1987թ.՝ Խորհրդային Միության երիտասարդական գիտատեխնիկական ստեղծագործության համակարգի մրցանակ (Մոսկվա):